բայրները, որոնք քիչ տաեռնեն կը վերադառնան : Խօսքն իրե՛ն տանք նորեն. «. . . Եղբայրս «մեքենան տեղը անցուց, որով անկէ զատ 4 արագաթիվ, լիթոկրաֆի և **բայլ տուս** տպելու «համար ալ մէկ մէկ մեքենայ : Կրկին տպուելիք 100 նոց, 50 նոց, 20 նոց և 10 նոց գայիմ«ներու կաղապարները Կիլիջէի մեքենային մէջ Մարտիրոսը կը բանէր քարի վրայ և մեր **լի«թոկրաֆ** բանող վարպետը գինկոյի վրայ **բրանցբորդ** ընելէն ետքը՝ Մկրտիչն ալ **ասիս**ով «կ'իջեցնէր. ես ալ ձեռքով փորուելիք գրերը կը փորագրեի կամ **ասիս**ով իջածները կը սրբա«գրեի : Բայց որովհետև մեր պարոնները չէին սիրեր աշխատիլ, **ասիս**ով իջեցնելը՝ Զարի«ֆեանի, կալվանոյի գործողութիւնն ալ կագմարար Ցակորի իրը բէ սորվեցնելով ամբողջ օրը «ժամավաճառ. ըլլալ կ'ուզեին իրենք» : — 1856 Մայիս 26 ին Միհ.ենտիսեան ձեռնամուխ կ'ըլլայ տպագրութեան Օմ. Գոնաօլիին (հեղինակութիւն Տիւգեան Միհրան պէյի), որուն համար բաւական նեղութիւն քաշած է՝ բէ՛ ուրուագիծերուն պատրաստութեան և բէ կրկին երեսներով զոյնզգոյն տիպին, բուարկութեանց և տեսարներու կազմին համար : — 1860 էն սկսեալ իր բախտը կ'սկսի խոժոռիլ. ձախողուած ձախողուածի՛ վրայ : Թղթադրամներուն հրապարակէն վերցուելու որոշման, զայնս տպագրելու համար յատկապէս գնած կազմածքին ու պատրաստած կաղապարներուն վատնած ստակին, մանաւանդ գինք շրջապատող ապիրատներու յոռի վարմունքին պատճառաւ կ'ենթարկուի նիւթական անագին վնասներու : Ի ծնէ բարի սիրտով, ամենուն բարիք կամեցող, ազնիւ, դիւրահաւան և պարզամիտ՝ սոթքուած է սրկէ ու նրկէ [անուններ չենք ուզեր տալ՝ շեղած չըլլալու համար գործիս նպատակէն,] որոնք բազմից անիրաւ շահարաժիններ շորթած, տոկոսներով և խարդաւանանքներով փճացուցած են այն պատկառելի հարստութիւնը զոր Միհ.ենտիսեան իր մոգական տաղանդով ու ճակտին քրտինքով էր դիզած : Կ'ստիպուի Ղալաթիոյ տպարանին շենքը գրաւի դնել, խաղալիք դառնալ նենգամիտ փաստաբանի մը ձեռքը, իսնալ միշտ պարտքի տակ ու կեղեքուիլ բարեկամներու ասնուր շահատակութիւններով, մինչեւ իսկ իր շինած պղպղատեայ հայ տառերը միամտաբար պահ տալ Թաշճեան Պետրոս անուն անձի մը : — Նոյն միջոցին, 1865 թ. Երուսաղէմի նորընտիր պատրիարք Եսայի Ս. պաշտօնով Պոլիս եկած ըլլալով՝ փափաք յայտնած էր Միհ.ենտիսեանի մայր տառերը գնել ու միասին տանիլ, Ս. Ցակովբեանց վանքը ձուլարան մը հիմնելու մտօք : Թաշճեան մայրերը կը ծախէ անոր, և փոխարժէքն իրեն ու համախոհ փաստաբանին կը յատկացունէ, ազնուութիւնը գործելով զոնէ հայր գիրերը բո՛ւն տիրոջը դարձուցնելու վերաբերեալ : — Սակայն տպարանին վիճակը վատթարանալ սկսած էր, գործառնութիւններն ալ կաղն ի կաղ ընթանալ. այնպէս որ պարտքի և յարակից տխուր մտմտուքներով պաշարուած՝ տարաբախտ հայ տպարանապետն ու գրաձուլիչը ժամանակ չունենար մայր գիրերը վերակերտելու, այսինքն պղինձի գարնելով պակաձներուն տեղը դնելու : Այսչափն իրը բէ հերիք չըլլար, պարտապանջներէ ոմանք չեն խղճար բանտարկելու զինք, տպարան ու գործ ձեռքէն կորզելու սեւ առաջադրութեամբ : — Տեղը չէ՞ յիշել հանուր մարդկութեան պարծանք Կիւթենպէրկը՝ շահամոլ և նենգամիտ Ֆաուսթի մը ձեռքը խաղալիք դարձած . . . : — Այսպէս, Միհ.ենտիսեան դառնացած իր կեղծ բարեկամներուն ընթացքէն՝ հայերէն տառ. շինելու, ձուլելու և տպելու գրադումը կը լքէ ակամայ, պետական գործերով պարապելով՝ նիւթական կորուստները հաւասարակշռելու ակնկալութեամբ : — Մտասեւեռումն էր տաճկ. նոր գիր մը յօրինել : Կը դիմէ Բումէլի Գագաբէրի՝ Մարաֆա Եգզէք էֆենտիի — երեւելի գեղագիր — որմէ **նէսխի** կոչուած գիրերու օրինակներ ստանալով՝ սկիզբ կու տայ շինութեանն ատոնց պղպղատեայ հայերուն, յոյժ ճարտարութեամբ : Այդ տառերով է որ կը շարէ և մաքուր կը տպագրէ տաճկ. քերքուած մը, մատուցանելով զայն օրուան աւագանիին : — «Ցիրաի (կը յարէ Սատրազամ Բաշան, հիացիկ դիտելէ վերջ այդ նրբաձոյլ ու ջքնաղ տողերուն շարուրանքը), շատ գոհ եմ որ այսպիսի փառաւոր յիշատակ մը ձգելու պատճառ եղաք : **Ազգովին շնորհակալ ըլլալու ենք ձեզ** » : Կառավարութիւնը կը յատկացունէ անոր բաւականաչափ դրամ : Աշխատութենէ չվնատող տաղանդաշատ վարպետը գործին գլուխն է նորեն, Գատրքէօյի իր բնակարանին պարտեզին մէջ հիմնելով ձուլարան մը՝ նոյն գրադումին համար : — Իր ձեռակերտներն են նաեւ կարգ մը դրրոշմաթուղթեր (վարազայի սահիմ), որոնց նմանը ո՛չ Զրրչի անուն Անգլիացին Բարիզի մէջ, ո՛չ ալ տեղացի ուրիշ արուեստագէտներ յաջողած են պատրաստել :

* * 76 տարու էր արդէն, երբ հեղինակեց 16 **բուցբо** տաճկ. «նէսխի» գիրերը՝ որոնք հիմայ շատ կը գործածուին : Այս գործն ալ իր կեանքին տասը տարիները գողցած է : Իսկ 79